ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/91

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Վիոլա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 12.10.2020թ.),

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի

լիազորված ներկայացուցիչ Ա. Եղիազարյանի (լիազորագիր՝ տրված 23.10.2020թ.),

քննելով «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 09.10.2020թ. ներկայացված (12.10.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/91 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Վիոլա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 09.10.2020թ. ներկայացված բողոքով

հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների եվ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցում:

Ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան:

Ընթացակարգին, ի թիվս 12 մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վիոլա» ՍՊԸ-ն (5-րդ չափաբաժնի մասով):

Տվյալ ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից՝ «Վիոլա» ՍՊԸ-ն և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, սակայն «Վիոլա» ՍՊԸ-ի գնային առաջարկը եղել է ավելի ցածր:

«ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ (պատճեն կցվում է) մի շարք ընկերությունների հայտերում (բայց ոչ «Վիոլա» ՍՊԸ-ի հայտում) արձանագրվել են անհամապատասխանություններ և մասնակիցներին տրվել է ժամկետ՝ մինչև 28.09.2020թ. կատարել համապատասխան շտկումները:

Այնուհետև, հանձնաժողովի նույն թիվ 2 արձանագրության, բայց արդեն 28.09.2020թ. հրավիրված նիստի, գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ կրկին ուսումնասիրելով «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը, ներկայացված փաստաթղթերում արձանագրել է անհամապատասխանություն և առաջարկել մինչև 29.09.2020թ. կատարել համապատասխան շտկում:

28.09.2020թ. «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը իր էլեկտրոնային հասցեից ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին ուղարկել է նամակ՝ խնդրելով կատարել շտկում «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով ներկայացրած հայտում, և միևնույն ժամանակ նամակում նշել է, որ ծանուցումը չի ուղարկվում armeps համակարգով, քանի որ այդ համակարգը չի գործում (էլ. նամակի արտատպումը կցվում է):

«ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն թիվ 2 արձանագրության, բայց արդեն 29.09.2020թ. կայացած նիստի, գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել գնահատել «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը բավարար:

Նույն օրվա նիստով որոշում է կայացվել հրավիրել միաժամանակյա բանակցություններ 05.10.2020թ.:

«ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն թիվ 2 արձանագրության, բայց արդեն 05.10.2020թ.կայացած նիստի, արձանարգվել է, որ Ընթացակարգի 12 մասնակիցներից բանակցություններին մասնակցել են ընդամենը 2 մասնակից՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն և «Մերկադո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և բանակցություններին այդ չափաբաժնով միակ մասնակցող «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն նվազեցրել է իր գնային առաջարկը և տալով «Վիոլա» ՍՊԸ-ի հայտով տված նախնական գնից ավելի ցածր գին՝ հաղթող մասնակից է ճանաչվել այդ չափաբաժնի մասով:

06.10.2020թ. www.gnumner.am համացանցային կայքում (արտատպումը կցվում է) հրապարակվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումը և սահմանվել է անգործության ժամկետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Փակ մրցույթի դեպքում հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների մի շարք խախտումների վրա, որոնք թույլ է տվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մասնավորապես.

1. Նախ և առաջ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության մեջ ներառվել է տեղեկատվություն միանգամից 24.09.2020թ., 28.09.2020թ., 29.09.2020թ. և 05.10.2020թ. հրավիրված նիստերի մասին: Այլ կերպ ասած, 24.09.2020թ. թվագրված նիստի արձանագրությունով արձանագրվել է հայտերի բացման նիստը, հայտերի գնահատման նիստը, բանակցությունների անցկացման նիստը և նույն արձանագրությամբ կայացվել է որոշում պայմանագիր կնքելու վերաբերյալ, այսինքն մեկ արձանագրությունով արձանգրվել է Ընթացակարգի ողջ ընթացքը: Մինչդեռ, «Գնումների մասին» ՀՀ օրենքը առանձնացնում է թե հայտերի բացման, թե հայտերի գնահատման նիստերը:

2. Հայտերի բացման նիստը, որը տեղի է ունեցել 24.09.2020թ., հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում միայն 06.10.2020թ., այսինքն նիստից 12 օր անց, մինչդեռ Օրենքի 33-րդ հոդվածը իմպերատիվ պահանջում է, որ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում: Այլ կերպ ասած, 24.09.2020թ. նիստի արձանագրությունը պետք է հրապարակվեր www.gnumner.am համացանցային կայքում արդեն իսկ 25.09.2020թ.:

3. Հայտերի գնահատման նիստը, որը տեղի է ունեցել 28.09.2020թ., հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում միայն 06.10.2020թ., այսինքն՝ նիստից 8 օր անց, մինչդեռ Օրենքի 34-րդ հոդվածը իմպերատիվ պահանջում է, որ հայտերի գնահատման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի գնահատման նիստի արձանագրությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում: Այլ կերպ ասած, 28.09.2020թ. նիստի արձանագրությունը պետք է հրապարակվեր www.gnumner.am համացանցային կայքում արդեն իսկ 29.09.2020թ.:

4. 29.09.2020թ. հայտերի գնահատման երկրորդ փուլի նիստի արձանագրությամբ որոշում է կայացվել 05.10.2020թ. հրավիրել միաժամանակյա բանակցություններ, բայց այս

արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում միայն միայն 06.10.2020թ., այսինքն ոչ մի մասնակից չէր կարող տեղեկանալ արձանագրությունից, որ 05.10.2020թ. հրավիրվելու է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ, քանի որ արձանագրությունը հապարակվել է տեղեկագրում բանակցությունների նիստից հետո՝ հաջորդ օրը:

5. Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ հայտերի գնահատման նիստի ժամանակ մի շարք ընկերությունների հայտերում (բայց ոչ «Վիոլա» ՍՊԸ-ի հայտում) արձանագրվել են անհամապատասխանություններ և մասնակիցներին տրվել է ժամկետ՝ մինչև 28.09.2020թ. կատարել համապատասխան շտկումները: Իսկ այնուհետև հանձնաժողովի նույն թիվ 2 արձանագրության համաձայն՝ արդեն 28.09.2020թ. հրավիրված նիստի ժամանակ, գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ կրկին ուսումնասիրելով «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը, ներկայացված փաստաթղթերում արձանագրել է անհամապատասխանություն և առաջարկել մինչև 29.09.2020թ. կատարել համապատասխան շտկում: Ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովը պետք է գնահատման գործողությունները իրականացներ միաժամանակ, այլ ոչ թե երկու փուլով և ԿՐԿԻՆ ուսումնասիրելով «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը, ինչը ավելի, քան կասկած է հարուցում:

29.09.2020թ. հայտերի գնահատման երկրորդ փուլի նիստի արձաագրությամբ որոշում է կայացվել 05.10.2020թ. հրավիրել միաժամանակյա բանակցություններ: Ենթադրաբար, գնահատող հանձնաժողովի քարտուղարը պետք է armeps համակարգի միջոցով ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցեր Ընթացակարգի բոլոր մասնակիցներին՝ հրավիրվող բանակցությունների վերաբերյալ: Սակայն պետք է փաստել, որ այդ օրերին (անգամ սույն բողոքը ներկայացնելու օրը) armeps համակարգը գրեթե չի աշխատել: Armeps համակարգի չաշխատելու փաստը հավաստել է նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, ով 28.09.2020թ. իր էլեկտրոնային հասցեից ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին ուղարկել է նամակ՝ խնդրելով կատարել շտկում ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86 ծածկագրով ներկայացրած հայտում, և միաևնույն ժամանակ նամակում նշել է, որ ծանուցումը չի ուղարկվում armeps համակարգով, քանի որ այդ համակարգը չի գործում:

Բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ «Վիոլա» ՍՊԸ-ն armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով չի ստացել ոչ մի ծանուցում կայանալիք միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ և համապատասխանաբար չի տեղեկացվել ոչ դրա օրվա, ոչ էլ ժամի վերաբերյալ: Եվ դա բնական է, քանի որ armeps

համակարգի խափանումներով աշխատելու պայմաններում ՍՊԸ-ն իրականում կարող էր չստանալ այդ ծանուցումը (եթե այն, իհարկե, հաջողությամբ ուղարկվել է): Միաժամանակ, քանի որ տվյալ Ընթացակարգին վերաբերող ոչ մի նիստի արձանագրություն մինչև 06.10.2020թ. ներառյալ չի հրապարակվել www.gnumner.am կայքում, ապա «Վիոլա» ՍՊԸ-ն չէր կարող որևէ տեղեկատվություն ստանալ այդ Ընթացակարգից նաև պաշտոնական կայքից:

ՍՊԸ-ի զարմանքն է առաջացնում նաև այն փաստը, որ գնահատող հանձնաժողովի քարտուղարը շտկում կատարելու ծանուցումը իր էլ. հասցեին ուղարկում է ՍՊԸ-ի էլ. հասցեին՝ նշելով, որ ընտրել է այս եղանակը, քանի որ armeps համակարգը չի աշխատում, սակայն միաժամանակյա բանակցությունների անցկացման վերաբերյալ ծանուցումը չի ուղարկում մասնակիցներին նույն եղանակով: Արդյունքում միաժամանակյա բանակցություններին ընդնահուր 12 մասնակիցներից ներկայանում են ընդամենը 2 մասնակից:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ տվյալ ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից՝ «Վիոլա» ՍՊԸ-ն և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, սակայն «Վիոլա» ՍՊԸ-ի գնային առաջարկը եղել է ավելի ցածր: Իսկ բանակցություններին մասնակցած «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, լինելով միակ ներկան 5-րդ չափաբաժնի մասով, նվազեցնելով գինը՝ ի համեմատ «Վիոլա» ՍՊԸ-ի հայտով տված նախնական գնային առաջարկի, ստացել է հնարավորություն դառնալ հաղթող մասնակից:

Մինչդեռ «Վիոլա» ՍՊԸ-ն եթե տեղյալ լիներ անցկացվելիք բանակցությունների մասին և ներկա գտնվեր, ապա միանշանակ ներկայացնելու էր ավելի ցածր գնային առաջարկ, քան «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 33 և 34 հոդվածի պահանջները, իսկ վերոհիշյալը զրկել է մասնակիցներին, այդ թվում նաև «Վիոլա» ՍՊԸ-ին մասնակցելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված մասնակիցների շրջանակի

ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի խախտմանը, ինչպես նաև զրկել մասնակիցներին Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված գնման գործընթացին մասնակցելու իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին.

1. Ընդունել որոշում 5-րդ չափաբաժնի մասով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Ընդունել որոշում 5-րդ չափաբաժնի մասով նոր միաժամանակյա բանակցություններ անցկացնելու վերաբերյալ՝ այդ մասին պատշաճ ծանուցելով բոլոր մասնակիցներին:

Ի լրումն վերը շարադրված բողոքի՝ 22.10.2020թ. Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Բողոքի քննության նիստի ընթացքում Ձեր կողմից հարց հնչեցվեց, թե www.armeps.am համակարգում ՍՊԸ-ի որ էլեկտրոնային հասցեն է գրանցված, որպեսզի պարզ լինի, թե որ էլեկտրոնային հասցեին պետք է ստացվեր բանակցությունների հրավիրման մասին ծանուցումը: Միաժամանակ նիստի ժամանակ նշվեց, որ ՍՊԸ-ի կողմից նշված viola@arminco.com էլեկտրոնային հասցեն, կարծես թե, չի աշխատում, քանի որ այդ հասցեին հնարավոր չի լինում ուղարկել ոչ մի փաստաթուղթ, այդ թվում նաև Պատվիրատուի կողմից տրամադրված դիրքորոշումը:

Բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ www.armeps.am համակարգում որպես ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցե նշված է եղել viola@arminco.com էլեկտրոնային հասցեն,

նշված հասցեն նշվել է նաև Ընթացակարգով ներկայացված հայտում:

Սակայն, տվյալ Ընթացակարգին մասնակցելուց հետո հասկանալով, որ կարծես թե նշված viola@arminco.com էլեկտրոնային հասցեի հետ առկա են որոշ տեխնիկական խնդիրներ (չենք բացառում, որ խնդիրը կապված է եղել էլ. փոստի պրովայդեր arminco ընկերության հետ), «Վիոլա» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ ՖՆ համապատասխան պատասխանատու ստորաբաժանմանը՝ խնդրելով www.armeps.am համակարգում որպես ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցե նշված viola@arminco.com էլեկտրոնային հասցեն փոխարինել viola.diag@gmail.com էլ. հասցեով:

Տեղեկացնում ենք, որ 10.10.2020թ. www.armeps.am համակարգում որպես ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցե արդեն նշված է viola.diag@gmail.com էլեկտրոնային հասցեն, որը աշխատում է առանց խափանումների:

Գտնում ենք, որ հաշվի առնելով հենց նման տեխնիկական խնդիրների առաջացման հնարավորությունը, անհրաժեշտ է, որպեսզի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջների համապատասխան հրապարակվեին պաշտոնական տեղեկագրում, և այս դեպքում անկախ առաջացած տեխնիկական խնդիրների, «Վիոլա» ՍՊԸ-ն հնարավորություն կունենար տեղեկանալ վիճարկվող Ընթացակարգի ընթացքի մասին, այդ թվում նաև անցկացվելիք բանակցությունների օրվա և ժամի մասին, և արդյունավետ իրացներ «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված գնումներին մասնակցելու իր իրավունքը:

Գտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ամրագրված պահանջները՝ հայտերի բացման և գնահատման նիստերի արձանագրությունները սահմանված ժամկետում հրապարակելու վերաբերյալ, ինքնանպատակ չեն, և օրենսդիրը սահմանելով նման պահանջներ, հետապնդել է բացառապես մի նպատակ՝ հնարավորինս թափանցիկ և հրապարակային դարձնել պետական գնման մրցույթները և օրենսդրորեն սահմանված սեղմ ժամկետներում հրապարային դարձնել մասնակիցների համար տեղեկատվությունը գնման ընթացակարգերի ընթացքի վերաբերյալ: Վերոհիշյալ օրենսդրական պահանջները հանդիսանում են լրացուցիչ երաշխիքներ հայտերի բացման և գնահատման նիստերի վերաբերյալ սահմանված ժամկետում տեղեկատվություն ստանալու համար, ինչը սույն Ընթացակարգի շրջանակներում խախտվել է գնահատող հանձնաժողովի կողմից:

Արդյունքում Վիոլա» ՍՊԸ-ն իր էլ. հասցեի՝ www.armeps.am, խափանման արդյունքում զրկվել է որևէ աղբյուրից տվյալ Ընթացակարգի ընթացքի, այդ թվում նաև բանակցությունների անցկացման օրի և ժամի մասին, տեղեկատվություն ստանալու հնարավորությունից:

Հարգելի պարոն Ներսիսյան, հայտնում ենք, որ «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածի պահանջները, իսկ վերոհիշյալը զրկել է «Վիոլա» ՍՊԸ-ին մասնակցելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի խախտմանը, ինչպես նաև զրկել մասնակիցներին Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված գնման գործընթացին մասնակցելու իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունից»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը կրկին խնդրել է պարտավորեցնել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում 5-րդ չափաբաժնի մասով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ և պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում 5-րդ չափաբաժնի մասով նոր միաժամանակյա բանակցություններ անցկացնելու վերաբերյալ՝ այդ մասին պատշաճ ծանուցելով բոլոր մասնակիցներին:

Այնուհետև՝ 04.11.2020թ. Ընկերությունը ներկայացրել է ևս մեկ բողոքի լրացում, որով հայտնել է հետևյալը.

«Ինչպես արդեն նշել էինք թիվ 1 լրացմամբ, բողոքի քննության նիստի ընթացքում Ձեր կողմից հարց հնչեցվեց, թե www.armeps.am համակարգում ՍՊԸ-ի որ էլեկտրոնային հասցեն է գրանցված, որպեսզի պարզ լինի, թե որ էլեկտրոնային հասցեին պետք է ստացվեր բանակցությունների հրավիրման մասին ծանուցումը: Միաժամանակ նիստի ժամանակ նշվեց, որ ՍՊԸ-ի կողմից նշված viola@arminco.com էլեկտրոնային հասցեն, կարծես թե, չի աշխատում, քանի որ այդ հասցեին հնարավոր չի լինում ուղարկել ոչ մի փաստաթուղթ, այդ թվում նաև Պատվիրատուի կողմից տրամադրված դիրքորոշումը:

Բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ www.armeps.am համակարգում որպես ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցե նշված է եղել viola@arminco.com էլեկտրոնային հասցեն, նշված հասցեն նշվել է նաև Ընթացակարգով ներկայացված հայտում:

Սակայն տվյալ Ընթացակարգին մասնակցելուց հետո հասկանալով, որ կարծես թե նշված viola@arminco.com էլեկտրոնային հասցեի հետ առկա են որոշ տեխնիկական խնդիրներ, «Վիոլա» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ ՖՆ համապատասխան պատասխանատու ստորաբաժանմանը՝ խնդրելով www.armeps.am համակարգում որպես ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցե նշված viola@arminco.com էլեկտրոնային հասցեն փոխարինել viola.diag@gmail.com էլ. հասցեով:

Վերոհիշյալ փաստերը հաստատելու համար «Վիոլա» ՍՊԸ-ն 27.10.2020թ. դիմել է ՀՀ ՖՆ՝ խնդրելով հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը, որպեսզի վերջինս պաշտոնապես ներկայացնի պատասխան, թե www.armeps.am համակարգում որպես «Վիոլա» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցե նշված viola@arminco.com երբ է փոխարինվել viola.diag@gmail.com էլ. հասցեով և այդ խնդրանքով ՍՊԸ-ն երբ է դիմել:

Ի պատասխան «Վիոլա» ՍՊԸ-ն 27.10.2020թ. դիմումի՝ ՀՀ ՖՆ հայտնել է հետևյալը (գրությունը կցվում է). «ՀՀ ֆինանսների նախարարությունը «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից պաշտոնական գրություն չի ստացել էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխության վերաբերյալ: Հայտնում ենք նաև, որ կազմակերպության օգտվողի տվյալները հասանելի են օգտվողին, որոնց խմբագրումը իրականացնում է մասնակիցը՝ «Խմբագրել հաշիվը» գործառույթի միջոցով: Միաժամանակ հայտնում ենք, որ ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության հարցման, համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությունը տեղեկացրել է, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են օգտվողի կայք-էջի խմբագրումներ 02/06/2020թ, ժամը 18:07-ին, 23/09/2020թ, ժամը 10:37-ին, 23/09/2020թ, ժամը 18:52-ին և 28/09/2020թ, ժամը 16:16-ին, որոնց արդյունքում 02/11/2020թ, ժամը 14:23-ի դրությամբ՝ օգտվողի կայք-էջում ամրագրված է viola.diag@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեն»:

Ամփոփելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ հաշվի առնելով, որ viola@arminco.com էլեկտրոնային հասցեի հետ առաջացել էին որոշ տեխնիկական խնդիրներ՝ կապված arminco պրովայդերի հետ, «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է համակարգում էլ. հասցեի փոփոխություն (գրանցվել էր viola.diag@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեն)՝ 23/09/2020թ ժամը 10:37-ին, սակայն նույն օրը հասկանալով, որ տվյալ

ժամանակահատվածում բոլոր հայտերը ներկայացվել են viola@arminco.com էլեկտրոնային հասցեով, ուստի որոշում կայացվեց նույն օրը, ժամը 18:52-ին հետ վերադառնալ հին՝ viola@arminco.com էլ. հասցեին:

Այնուհետև, քանի որ մինչև 28/09/2020թ. գրեթե ոչ մի նամակ չի ստացվել նշված viola@arminco.com էլեկտրոնային հասցեով, ինչի մասին հայտնել են տարբեր ընթացակարգի շրջանակներում տարբեր պատվիրատուներ, ՍՊԸ-ն 28/09/2020թ. ժամը 16:16-ին կրկին իրականացրել է համակարգում էլ. հասցեի փոփոխություն՝ վերջնականապես գրանցելով viola.diag@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեն, ինչով որ մինչ օրս աշխատում է:

Գտնում ենք, որ հաշվի առնելով հենց նման տեխնիկական խնդիրների առաջացման հնարավորությունը, անհրաժեշտ է, որպեսզի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջների համապատասխան հրապարակվեին պաշտոնական տեղեկագրում, և այս դեպքում անկախ առաջացած տեխնիկական խնդիրների, «Վիոլա» ՍՊԸ-ն հնարավորություն կունենար տեղեկանալ վիճարկվող Ընթացակարգի ընթացքի մասին, այդ թվում նաև անցկացվելիք բանակցությունների օրվա և ժամի մասին, և արդյունավետ իրացներ «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված գնումներին մասնակցելու իր իրավունքը:

Արդյունքում «Վիոլա» ՍՊԸ-ն իր էլ. հասցեի՝ www.armeps.am, խափանման արդյունքում զրկվել է որևէ աղբյուրից տվյալ Ընթացակարգի ընթացքի, այդ թվում նաև բանակցությունների անցկացման օրի և ժամի մասին, տեղեկատվություն ստանալու հնարավորությունից»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը կրկին խնդրել է պարտավորեցնել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում 5-րդ չափաբաժնի մասով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ: Ինչպես նաև խնդրում ենք պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում 5-րդ չափաբաժնի մասով նոր միաժամանակյա

բանակցություններ անցկացնելու վերաբերյալ՝ այդ մասին պատշաճ ծանուցելով բոլոր մասնակիցներին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.10.2020թ. ժամը 10:10-ին և 23.10.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 15.10.2020թ. թիվ 01/10-224 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վիոլա» ՍՊԸ-ի այն պնդումը, որ չի պահպանվել օրենդրության միաժամանակ բոլոր մասնակիցների ծանուցելու պահանջը, չի համապատասխանում իրականությանը, քանի որ ընթացակարգի արձանագրությունը պատշաճ ծանուցվել է բոլոր մասնակիցներին, միաժամանակ, գնումների էլեկտրոնային ARMEPS համակարգի միջոցով:

Բանակցությունների նիստին ներկայացել են 3 մասնակից, ինչը փաստում է մասնակիցների՝ ծանուցում ստանալու հանգամանքը: Գրությանը կից ներկայացվում են նաև ևս 6 մասնակիցների կողմից ծանուցումը ստանալու հանգամանքը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումները (Screenshot):

Ինչ վերաբերվում է ամբողջ ընթացակարգը մեկ արձանագրությամբ ներկայացնելու և սահմանված ժամանակում չհրապարակելու պնդմանը, նշեմ, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետով հստակ սահմանված է հայտերի բացման և գնահատման նիստ, հաջորդական քայլերով և ներկայումս գործող օրենսդրությամբ առանձնացված չեն հայտերի բացման և գնահատման նիստերը: Կարգի 43-րդ կետով սահմանված է, որ «Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի

հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.»

Թիվ 2 արձանագրության 24.09.2020թ., 28.09.2020թ., 29.09.2020թ. նիստերը հայտերի բացման և գնահատման նիստի կասեցումներն են: 05.10.2020թ. տեղի է ունեցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ, որի արդյունքում հայտարարվել են ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցները և ավարտից հետո՝ հաջորդ աշխատանքային օրը սահմանված կարգով և ժամկետում հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում՝ միաժամանակ գնումների էլեկտրոնային ARMEPS համակարգի միջոցով ծանուցելով բոլոր մասնակիցներին (արտատպումը կցվում է):

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում, ինչը ենթադրում է, որ նշված ժամանակահատվածում գնահատող հանձնաժողովը, օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ամբողջական և հանգամանալից գնահատելու նպատակով ևս մեկ անգամ ուսումնասիրել է «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը, անհամապատասխանություն արձանագրել և որոշում կայացրել վերջինից պահանջել հիմնավորող փաստաթղթեր:

Վերոշարադրյալը փաստում է, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի հիմնական սկզբունքներն ու նպատակները, ինչպես նաև չեն ոտնահարվել մասնակիցների շահերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.10.2020թ. ժամը 10:10-ին և 23.10.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 19.10.2020թ. ժամը 10:10-ին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին, ով իր հերթին ներկայացրել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետի համաձայն՝ «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն ԳԲՔԱ-ՆԳ-2020/91 բողոքի շրջանակներում ներգրավվել է որպես պարտադիր կողմ:

«ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն 22.10.2020թ. գրությամբ ներկայացրել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ընթացակարգի շրջանակներում ուղարկված ծանուցումների վերաբերյալ ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգում առկա հետևյալ տեղեկատվությունը.

Տեղեկատվություն				
ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <Ոչ ավտոմատ ծանուցման> եղանակով պատվիրատու-օգտվողներին և նշված ընթացակարգին հետաքրքրություն ցուցաբերած այն մասնակիցներին ուղարկված ծանուցումների մասին, որոնք հետաքրքրություն ցուցաբերելիս նշել են իրենց օգտվողին կամ օգտվողներին նշված ընթացակարգին վերաբերող ծանուցումներն ստանալու մասին ընտրանքները				
Գործունեության տիպ	Սերվերի անուն	Ստեղծման ամսաթիվ	Երկրորդային ԳԿ անուն	Երկրորդային հաշվի անունը
Ոչ ավտոմատ ծանուցում	172.31.0.34	25/09/2020 15:47	Մրցույթի՝ ոչ ավտոմատ ծանուցում	concerntender,donnamaria1919,sarash,uak_petros,makvah,uak_aram,uak_gh studio,uak_shushanik,shushi,luga,mediplus,diamondmed2020,hrachkapur,ar haryan,kanipharm7,leyko,erem,acairpowerarm,merkado,uak_garik,shinhidro badalyan,smartline,taghem,concernenergomash,mauntltd,merkadohashvapah ,concern-energomash,medtechleo,dezservicellc,concern,donnamaria19,kharutyun,uak_ edgroup,ruzan,medexpert,hashvapah
Ոչ ավտոմատ ծանուցում	172.31.0.34	30/09/2020 15:52	Մրցույթի՝ ոչ ավտոմատ ծանուցում	concerntender,donnamaria1919,sarash,uak_anahit2,uak_petros,makvah,uak_ ond,boo-studio,uak_shushanik,shushi,luga,mediplus,diamondmed2020,hrachkapur,ar haryan,kanipharm7,leyko,erem,acairpowerarm,merkado,uak_garik,shinhidro badalyan,smartline,taghem,concernenergomash,mauntltd,merkadohashvapah ,concern-energomash,medtechleo,dezservicellc,concern,donnamaria19,kharutyun,inte an,medexpert,hashvapah
Ոչ ավտոմատ ծանուցում	172.31.0.34	6/10/2020 16:58	Մրցույթի՝ ոչ ավտոմատ ծանուցում	concern,smartline,medtechleo,sarash,hrachkapur,unimed,melsik,armenphar edgroup,taghem,mauntltd,makvah,erem,vavxxx,concerntender,shinhidro,has an,uak_shushanik,uak_petros,concernenergomash,concern-energomash,dezservicellc,medexpert,leyko,merkado,boo-studio,merkadohashvapah,kanipharm7,mediplus,uak_aram,uak_garik,diamor duhibadalyan,acairpowerarm,uak_ghevond,donnamaria19,kharutyun,shushi,l 2,donnamaria1919

«ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.10.2020թ. ժամը 10:10-ին և 23.10.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/91 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/91 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վիոլա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2020թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ 29.09.2020թ. նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը և արձանագրվել, որ վերջիններս բավարարում են անհրաժեշտ պայմաններին:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը կասեցնել մինչև 05.10.2020թ. ժամը 10:30-ն և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 30.09.2020թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի (հետայսու նաև՝ Համակարգ) միջոցով ուղարկվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» վերնագրով ծանուցում միաժամանակյա բանակցությունների նիստի վերաբերյալ՝ ստացողներ դաշտում նշելով «բոլոր ՏՕ-ի ՊՊ-ներին կցագրված ողջ ադմինը» և «ՄՀ-ին կցագրված բոլոր ՊՊԳՊ օգտվողները»:

5. Նույն արձանագրության համաձայն՝ 05.10.2020թ. հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին ներկայացել են «Մերկադո» ՍՊԸ-ի և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացուցիչները, և արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վիոլա» ՍՊԸ-ի 09.10.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 15.10.2020թ. թիվ 01/10-224 գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության՝ 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

(…)

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

(…)

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

(…)

Այսպես՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վիոլա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2020թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ 29.09.2020թ. նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը և արձանագրվել, որ վերջիններս բավարարում են անհրաժեշտ պայմաններին:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը կասեցնել մինչև 05.10.2020թ. ժամը 10:30-ն և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 30.09.2020թ. Համակարգի միջոցով ուղարկվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» վերնագրով ծանուցում միաժամանակյա բանակցությունների նիստի վերաբերյալ՝ ստացողներ դաշտում նշելով «բոլոր ՏՕ-ի ՊՊ-ներին կցագրված ողջ ադմինը» և «ՄՀ-ին կցագրված բոլոր ՊՊԳՊ օգտվողները»:

Նույն արձանագրության համաձայն՝ 05.10.2020թ. հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին ներկայացել են «Մերկադո» ՍՊԸ-ի և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացուցիչները, և արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին 3-րդ, 4-րդ և

5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

«Վիոլա» ՍՊԸ-ն 09.10.2020թ. ներկայացված բողոքով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է, ***որ «Վիոլա» ՍՊԸ-ն Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով չի ստացել ծանուցում կայանալիք միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ և համապատասխանաբար չի տեղեկացվել ոչ դրա օրվա, ոչ էլ ժամի վերաբերյալ:***

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 29.10.2020թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/16332-2020 գրությամբ դիմել է «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ին՝ խնդրելով տեղեկատվություն՝ հետևյալի վերաբերյալ.

1. Արդյոք «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Armeps էլեկտրոնային համակարգի միջոցով 30.09.2020թ. «Վիոլա» ՍՊԸ-ի viola@arminco.com էլ. փոստին ուղարկվել է նամակ (վերնագիր՝ ՈւԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86), թե ոչ:

2. 30.09.2020թ. դրությամբ Armeps էլեկտրոնային համակարգում որպես «Վիոլա» ՍՊԸ-ի էլ. փոստ գրանցված էլ. փոստի հասցեն, իսկ եթե կատարվել է հասցեի փոփոխություն, ապա նշել, թե երբ է կատարվել:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն 04.11.2020թ. հայտնել է հետևյալը.

1.«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով 30.09.2020թ. «Վիոլա» ՍՊԸ-ի viola@arminco.com էլ. փոստին նամակ չի ուղարկվել:

2. ARMEPS էլեկտրոնային համակարգում նշված է «Վիոլա» ՍՊԸ-ի viola.diag@gmail.com էլ. փոստի հասցեն: Համակարգում «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից իրականացված փոփոխությունների ամսաթվերը հետևյալն են՝ 02.06.2020թ., 23.09.2020թ., 28.09.2020թ.:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 04.11.2020թ. մեկ այլ՝ թիվ ԲՔԱ-ԳՆ/2/16567-2020 գրությամբ, կրկին դիմել է «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ին՝ խնդրելով հայտնել արդյոք «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Armeps էլեկտրոնային համակարգի միջոցով 30.09.2020թ. «Վիոլա» ՍՊԸ-ի viola.diag@gmail.com էլ. փոստին ուղարկվել է նամակ (վերնագիր՝ ՈւԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86), թե ոչ:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն 06.11.2020թ. հայտնել է հետևյալը.

«***Տեղեկացնում ենք, որ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՈւԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ընթացակարգի շրջանակներում ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով 30.09.2020թ. «Վիոլա» ՍՊԸ-ին նամակ չի ուղարկվել***:

Առավել մանրամասն ինֆորմացիա կարող է տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությունը»:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Վիոլա» ՍՊԸ-ի 09.10.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 15.10.2020թ. թիվ 01/10-224 գրությամբ հայտնած դիրքորոշումը, ինչպես նաև «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գտնում եմ, ***որ սույն գործով ձեռք բերված փաստական հանգամանքները մեկնաբանվում են ի օգուտ Ընկերության, մասնավորապես՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՈւԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ընթացակարգի շրջանակներում ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 30.09.2020թ. «Վիոլա» ՍՊԸ-ին նամակ չի ուղարկվել, այսինքն՝ Ընկերությունը չի ծանուցվել և պատշաճ կերպով տեղեկացված չի եղել 05.10.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված բանակացությունների նիստի վերաբերյալ և զրկված է եղել իր իրավունքներն իրացնելու՝ օրենքով իրեն վերապահված հնարավորությունից:***

Այսպիսով, վերոգրյալ հիմնավորումներով պայմանավորված, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, հաշվի առնելով Ընկերության շահը՝ գտնում եմ, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 09.10.2020թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՈւԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝

1. Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Նույն չափաբաժնի մասով նոր միաժամանակյա բանակցություններ անցկացնելու վերաբերյալ՝ այդ մասին պատշաճ ծանուցելով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**